ԿԱՐԾԻՔ

Արտակ Սուրիկի Խաչատրյանի «ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը և Ղարաբաղյան հակամարտությունը. ազգաբանական ուսումնասիրություն» Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Աշխատանքին ծանոթանալիս առաջին հայացքից թվում է, թե հեղինակն անդրադարձել է շատ տարբեր խնդիրների, որոնց մասին կարելի էր և չգրել: Տպավորություն է ստեղծվում, որ հարցի քննարկումն սկսվում է, պատկերավոր ասած, «Նոյյան ժամանակներից»: Սակայն աշխատանքին ծանոթացման ավարտին, երբ մտովի համեմատում ես մյուս նմանատիպ գործերի հետ, տեսնում ես, որ «Նոյյան ժամանակներին» անդրադարձն, այնուամենայնիվ, օգտակար է թե ընթերցողի, թե ատենախոսության համար, քանի որ ձևավորում է *համապարփակության* զգացում:

Աշխատանքը, թերևս, կարելի է որակել որպես միջգիտակարգային: Այստեղ և պատմություն (ԽՍՀՄ, հայոց, գաղափարախոսությունների) կա, և քաղաքագիտություն, և ազգագրություն (ավելի շուտ՝ ազգագրական մտքի պատմություն): Ատենախոսի միտքն անընդհատ աշխատում է, պրպտում է, և հեղինակը փորձում է՝ նորովի հայացք գցելու միջոցով, նոր պատասխաններ առաջարկել հին հարցերին: Այս տեսանկյունից այն ներդրում է հայաստանյան պատմագիտական մտքի մեջ:

Իրոք, ղարաբաղյան հակամարտության մասին շատ է գրվել, սակայն հայաստանյան իրականության մեջ այն չի դիտարկվել «ԽՍՀՄ ազգային քաղաքականության համեմատաբար բազմակողմանի» ուսումնասիրության համատեքստում: Այդ գործին ձեռնամուխ է լինում ատենախոսը և աշխատանքի առաջին և երկրորդ գլուխներում գնում է դեպի խնդրի հետազոտության ակունքները. տեսություն (ազգերի և ազգայնականության մասին հին ու նոր տեսական մոտեցումների քննարկումներ) և պրակտիկա (ցարիզմի քաղաքականությունը ազգային հարցում Այսրկովկասի տարածքում): Հեղի-

նակն ապա իրավամբ նկատում է, որ «ղարաբաղյան հակամարտությունն ունի խորհրդային ժառանգության բաղադրիչ, և խնդրի քննմանն ու լուծմանը միտված տրամասություններում անհնար է շրջանցել խորհրդային ազգային-պետական քաղաքականությունը», որի վերլուծությանն էլ նվիրում է ատենախոսության երրորդ գլուխը, որն, իմ կարծիքով, թերևս ամենահաջողն է: Չորրորդ գլուխն, որտեղ քննվում է արցախյան հակամարտությունը արդի կոնֆլիկտաբանության համատեքստում, ավելի քաղաքագիտական ուղղվածություն ունի:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում բավականին հանգամանորեն և պրոֆեսիոնալ կերպով վերլուծվում է «ազգային քաղաքականության և ազգերի ինքնորոշման իրավունքի հարցում բոլշևիկների դիրքորոշումը», որն իրավացիորեն բնութագրվում է որպես «երկդիմի» և «ըստ իրադրության՝ փոփոխական», ինչպես այսօր կասեին՝ ցույց է տրվում հարցի մանիպուլացումը: Մասնագիտական գրականության վերլուծությամբ շեշտվում է մի նրբություն (էջ 57-58), որը հաճախ աչքաթող է արվում կամ այլ կերպ է ներկայացվում մեր պատմագրության մեջ. «բոլշևիկները հոգում են ոչ թե ժողովուրդների և ազգերի ինքնորոշման մասին, այլ պրոլետարիատի՝ յուրաքանչյուր ժողովրդի մեջ», այսինքն՝ «ողջ էթնիկ հանրությունից բոլշևիկները զատորոշում էին սոցիալ-մասնագիտական մեկ խմբի և դրա շահերը գերակա հայտարարում էթնիկ հանրության մնացյալ մասի վրա» և որ «Ազգային հարցում բոլշևիզմի քաղաքականության երկդիմիությունն արտահայտվեց նաև նրանում, որ հանուն պետության ամբողջականության պահպանման՝ բոլշևիկները փարվեցին մեծառուսական պետական ազգայնականության գաղափարին, թեև շղարշում էին այն ինտերնացիոնալիստական հռետորաբանությամբ»: Ընդհանրապես, երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆը աշխատանքի հաջող մասերից է:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «ԽՍՀՄ ազգային քաղաքականության հիմնական դրույթները», ատենախոսն անդրադառնում է թվում է թե վաղուց պարզաբանված հարցերի, որոնց, սակայն, նա առաջարկում է

նոր մեկնաբանություններ: Մասնավորապես, նորովի բացատրության փորձ է առաջարկվում ԼՂԻՄ-ի ձևավորման և այն Ադրբեջանական ԽՍՀ կազմում ներառելու մասին: Որպես ընդհանրական գաղափար, նախորդող էջերում տեղ գտած վերլուծության հիմամբ առաջարկվում է հետևյալը. «Հարկ է նշել, որ հայկական ու ադրբեջանական հայեցակարգերը տարածքի ընկալման առումով հակոտնյա էին: Եթե հայկական կողմի հայեցակարգը հիմնվում էր տարածքի, տվյալ դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի պատմականորեն հայկական տարածք լինելու իրողության վրա, ապա ադրբեջանականը, ելնելով վերջիններիս քոչվորական կացութաձևից, խարսխվում էր նախ և առաջ տարածքի տնտեսական նպատակահարմարության սկզբունքի վրա: Խորհրդային առաջին տարիներին Խորհրդային Ռուսաստանի համար առավել ընկալելի էր ադրբեջանական հայեցակարգը, քանզի Քաղաքացիական պատերազմի ծանր և քայքայիչ փուլի ավարտից հետո անհրաժեշտություն կար Ադրբեջանի հետ տնտեսական սերտ հարաբերությունների գործարկման՝ հաշվի առնելով նավթի գործոնը: Հենց վերոնկատյալ տնտեսական նպատակահարմարության գործոնը դեր խաղաց 1921թ. Կովբյուրոյի որոշման կայացման գործում» (էջ 65): Հետաքրքիր դիտարկումներ են բերված «կորենիզացիայի» (էջ 68, 70, 71), ապա և դրան հաջորդող քաղաքական գծերի զարգացումների մասին: Որոշ վերլուծություններից հետո ատենախոսն եզրակացնում է, որ «խորհրդային քաղաքականությունը պետք է լիներ պրոադրբեջանական, քանզի փորձ էր արվում կայացնել ադրբեջանական ազգը, իսկ մյուս կողմից դատապարտված էր լինել հակահայկական և հակաարցախյան: Տրամաբանությունն այն է, որ խորհրդային իշխանությունը, ստեղծելով արբեջանցիների՝ որպես ազգ կայացման համար անհրաժեշտ ինստիտուտներ, ակամայից նրանց դնում էր մրցակցության մեջ ԼՂԻՄ-ում արդեն իսկ գոյություն ունեցող ինստիտուտների հետ...» (էջ 75): Բավականին հանգամանորեն և ոչ ստանդարտ ձևով է շարադրված նաև երրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝ «ԼՂԻՄ կազմավորումը և սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումը», որտեղ երբեմն նորովի վերլուծվում են այդ գործընթացին

առնչվող փաստաթղթերը։ Նույն կերպ պետք է բնութագրեմ երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ ««Մենք»-ը և «նրանք»-ը հայ-ադրբեջանական հարաբերություններում. ազգաբանական առումներ» տեղ գտած վերլուծությունները։ Նյութի իմացության բարձր մակարդակով է շարադրված նաև երրորդ գլխի չորրորդ պարագրաֆը՝ «Էթնոքաղաքական ինքնության փնտրտուքներն Ադրբեջանում», ուր հանգմանալի անդրադարձ է կատարված ադրբեջանցիների էթնոգենեզի խնդրին, վերջին հարյուրամյակում այդ հարցադրման զարգացումներին, և եզրակացվում է, որ «ադրբեջանցիների ինքնությունը եռահատված է» (էջ 150)։

Անցնեմ առավելապես քննադատական բնույթ կրող մի քանի նկատառումների, դիտարկումների ու հարցադրումների։

1. Ատենախոսն եզրահանգում է (էջ 35), որ «Ռուսաստանը սկսեց սիրաշահման քաղաքականություն վարել կովկասյան թաթարների կամ թյուրքախոս շիաների նկատմամբ»։ Եվ որպես հիմնավորումներից մեկը նշվում է ազգայնականության գործոնի խաղարկման ճանապարհով (էջ 36) «թյուրքական էթնոգործոնի դերի ու կշռի» բարձրացումն, որն արվում էր վերջիններիս հավատակից պարսիկներին հակադրելու համար։ Սխալ չէ, ճիշտ է, սակայն, եթե առաջնորդվենք հակադրության համար փաստարկներ գտնելու հարցադրմամբ, ապա նույն նպատակով կարելի էր սիրաշահել նաև հայերին, քանի որ վերջիններս հազիվ ազատագրվել էին պարսկական բազմադարյան տիրապետությունից։ Երևի թե հայերը պակաս վտանգավոր էին դիտվում, սակայն ինչու սիրաշահել «թյուրքական էթնոգործոնին» ի հաշիվ հայերի։ Ատենախոսը հաջորդիվ նկատում է (էջ 37), որ «Կարծում ենք, որ ներկայիս ադրբեջանցիների ազգակերտման սկզիբը ծայր է առնում տվյալ պատմափուլից, և դա կատարվեց վերնից՝ ռուսական կայսերականության շահերի հետ ներհյուսման և միաժամանակ դրան ծառայելու արդյունքում»։ Ինչու՞ եմ շեշտում այս հանգամանքը։ Բանն այն է, որ ատենախոսն աշխատանքի այս հատվածից սկսած փորձում է որոնել ռուսաց քաղաքականության մեջ «թյուրքական էթնոգործոնի» նկատմամբ սիրաշահման

պատճառներն ու դրսևորումները, և «սիրաշահման» գործոնն է դառնում բացատրության հիմք՝ Այսրկովկասում ռուսաստանյան հաջորդիվ մեկուկես-դարյա քաղաքականության հարցում:

2. Աշխատանքի այս նույն հատվածում ատենախոսը շարունակում է. «պաշտոնական պետական հայեցակարգը խարսխված չէր որևէ կոնկրետ ազգային սկզբունքի վրա, և բնակչությունը դասակարգվում էր ամենից առաջ ըստ դավանանքի (օրինակ՝ ռուսների մեջ ներառում էին բելառուսներին, երբեմն՝ ցանկացած ուղղափառ քրիստոնյայի): Մեր կարծիքով, Ռուսական կայսրությանը ձեռնտու էր բնակչությունը տիպաբանել ըստ դավանանքի, քանզի ազգային սկզբունքի վրա շեշտադրելը հղի էր այն վտանգով, որ հետագա ազգայնական տրամադրությունների արթնացումը որպես վերջնական հանգրվան տեսնելու էր անկախ պետականության ստեղծումը: Դա ավելի ակնհայտ արդյունք կարող էր ունենալ Արցախում, որտեղ պետականության մասին ինստիտուցիոնալ հիշողությունը ոչ միայն առկա էր, այլև ոչ վաղ անցյալում մելիքության ինստիտուտը կատարում էր այդ դերը»: Շատ լավ, այդ պարագայում ինչու՞ Հայ առաքելական եկեղեցու դավանանքին պատկանող արցախահայությունը չընդգրկվեց Երևանի նահանգի մեջ, փոխարենը դրանում ներառվեց Նախիջևանի երկրամասը, որն ուներ նկատելի մուսուլմանական բնակչություն: Եվ Արցախի տարածքն ընդգրկվեց Ելիզավետպոլի նահանգի կազմում, որտեղ հայերը, եթե չեմ սխալվում, կազմում էին բնակչության ավելի քան մեկ երրորդը, այսինքն՝ բնավ էլ փոքրամասնություն չէին: Եվ ատենախոսը եզրակացնում է, որ «Այսպիսով, իր քաղաքականությամբ Ռուսաստանը նպաստում էր Արևելյան Այսրկովկասի թյուրքացմանը»: Ես կասեի, որ սա համարձակ դիտարկում է: Կարծում եմ, որ ցարական Ռուսաստանի քաղաքականությունն (որը հետո շարունակեց Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Միության ղեկավարությունը), *խառը բնակչությամբ վարչատարածքային միավորների ստեղծումն էր*, ինչը հնարավորություն էր տալիս, անհրաժեշտության դեպքում, մեկ էթնիկ հանրությանը հրահրել մյուսի դեմ, մեկի սոցիալտնտեսական և մշակութային

զարգացման ձգտումները ճնշել մյուսի միջոցով: Նկատեմ սակայն, որ հաջորդիվ, էջ 47-ում ատենախոսն իրավամբ շեշտում է, որ «Ցարական իշխանությունների նպատակն էր անել այնպես, որ կովկասյան բազմազգ երկրամասում որևէ նահանգի տեղական բնակչությունը մեծամասնություն չկազմի մյուս ազգությունների նկատմամբ, և որպեսզի մասնավորապես հայերը այս կամ այն վարչական տարածքում մեծամասնություն չկազմեն, այդ հայաբնակ գավառից անջատվել են առանձին մասեր և միացվել հարևան թուրքաբնակ տարածքներին»:

3. Շարունակելով հիմնավորումների ներկայացումը, ատենախոսը էջ 38-ում գրում է. «Կարծում ենք, որ կայսրության նման տարբերակված քաղաքականությունն ուներ նաև այլ հիմնապատճառներ: Այն պայմանավորված էր հայերի մեջ, ի տարբերություն հարևան թյուրքալեզու, հիմնականում քոչվոր կենսակերպ ունեցող էթնիկ հանրույթների՝ պետականության և ազգային արժեքների բարձր գիտակցությամբ, ինչը համապատասխան հող գտնելու պարագայում կարող էր գործնական հարթությունում վերաճել ազգային անկախության և ինքնուրույնության համար պայքարի, ինչին ականատես եղանք քսաներորդ հարյուրամյակի ավարտին՝ 1988-ին»: Նախ, այստեղ ժամանակային առումով անհամապատասխանություն կա. հեղինակը խոսում է 19-րդ դարի կեսերի մասին, բայց որպես հիմնավորում բերում է ավելի քան մեկ դար հետո տեղի ունեցածը: Եվ երկրորդ, այո, հայոց մեջ կար «ազգային արժեքների բարձր» գիտակցություն, սակայն հայկական ազգային կուսակցություններից և ոչ մեկը (ի տարբերություն գրական ու հասարակական գործիչների մի մասի) 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսաստանից կամ Օսմանյան կայսրությունից անկախանալու քաղաքական խնդիրներ չէր դնում: Չմոռանանք, որ անգամ 1918 թ. մայիսին անկախության հռչակմանը Հայոց ազգային խորհուրդը պատրաստ չէր: Մինչդեռ «քոչվոր կենսակերպ ունեցող» և էթնիկ դիմագիծը նոր-նոր ձեռք բերող կովկասաթաթարական/թյուրքադրեջանական կողմը կարծես թե ավելի պատրաստ էր: Ընդհանրապես հայ պատմագրության մեջ քոչվորական կենսաձև

ունեցող հանրույթների նկատմամբ առկա է «արհամարական» կամ «վերնից նայելու» մոտեցում: Հաճախ մոռացվում է այն փաստը, որ քոչվորական կենսաձև վարող ցեղախմբեր/ժողովուրդները ստեղծել են մի քանի հարյուրամյակ գոյատևող կայսրություններ, պետություններ, առնվազն իշխել են նստակյաց-երկրագործ ժողովուրդների վրա: Վստահ եմ, որ այդ գործոնի գիտակցումն առկա էր առնվազն Ռուսական կայսրությունում, որն իր պատմության ընթացքում տեսել էր Ոսկե հորդայի իշխանության դրսևորումները: Այնպես որ, ցարական իշխանության վարած «սիրաշահելու քաղաքականությունը» լրացուցիչ հիմնավորումների կարիք ունի:

4. էջ 44-ում ատենախոսը գրում է. «Ադրբեջանցի շատ հեղինակներ Շուշին համարում են առաջին ադրբեջանական բնակավայրը Լեռնային Ղարաբաղի տարածքում: Հարց է առաջանում. այդ դեպքում ինչպե՞ս է պատահում, որ XIX դարավերջին հենց Շուշիում կովկասյան թաթարները կազմում էին փոքրամասնություն՝ ի համեմատ հայերի (հայեր՝ 18690, կովկասյան թաթարներ՝ 11940) [СМОМПК-ի տվյալներն են]»: Ճիշտ է գրված, սակայն պետք է նկատել, որ 19-րդ դարի ընթացքում իրավիճակն անընդհատ փոխվել է. հայերի թիվը քաղաքի բնակչության մեջ կազմել է 40,4%-ից (1823 թ.) մինչև 56,7% (1886 թ.), «թաթարների» թիվը՝ 56,3%-ից (1823 թ.) մինչև 41,6% (1897 թ.), այսինքն, հայերն ունեցել են հարաբերական (ոչ բացարձակ) մեծամասնություն:[1] Շուշիի թեմային ատենախոսության մեջ անդրադարձ կա նաև էջ 137-138-ում հետևյալ համատեքստում. «Հայ-ադրբեջանական միջէթնիկ հարաբերությունների մինչխորհրդային շրջանի առանձին դրվագներ գտել են պատմական հիշողության մեջ սեփական մեկնաբանությունները՝ հիմք ունենալով բանավոր հիշողությունը: Հետաքրքիր իրողություններ են պահպանվել ժողովրդի պատմական հիշողության մեջ 1920 թ. մարտին Շու-

---

[1] Սրա մասին մանրամասն տես. Гамлет Саркисян, "Население Нагорного Карабаха за 100 лет (1823-1923 гг.) (Этнодемографическое исследование), *Հայագիտության հարցեր*, 2016, թիվ 2, էջ 59-81, ինչպես նաև Артур Мкртчян, *Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начало XX вв.)*. Ереван, изд-во "Гитутюн", 2010. Научные редакторы: Л. М. Варданян, А. Т. Марутян, с. , որտեղ տեղադրված «Этнический состав населения г. Шуши в XIX – начале XX в.» աղյուսակը նույնպես կազմել է Հավլետ Սարգսյանը:

շիի դեպքերի վերաբերյալ» և հղվում են Արտակ Դաբաղյանի և Մխիթար Գաբրիելյանի դաշտային-ազգագրական նյութերը, որոնցում նկարագրվում է Շուշիի կոտորածների սկզբի հետ կապված դեպքերը: Ամենայն հարգանքով հանդերձ իմ գործընկերների հավաքած նյութերին, կարծում եմ, որ այստեղ բանասացի ներկայացրած պատմության հիմքում առկա է ոչ թե «[ժողովրդի] բանավոր հիշողությունը», այլ բանասացի ծանոթ լինելը ինչ-ինչ հետազոտությունների: Եվ կարծում եմ, որ այստեղ դաշտային նյութերից զատ պետք էր հղել նաև այլ աղբյուրներ և գրականության: Ի մասնավորի, դրա մասին առկա է Լեոյի (*Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ*, Թիֆլիս, 1925, էջ 437-439), Բագրատ Ուլուբաբյանի (*Արցախյան գոյապայքար*, Երևան, 1997, էջ 78, 79), Բակուրի [Կարապետյան] (*Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920 թ.)*, Երևան, 2000, էջ 276-280) աշխատություններում:

5. Էջ 53-ում փաստական սխալ է սպրդնել. Российская социал-демократическая рабочая партия թարգմանաբար ներկայացված է որպես «Ռուսական սոցիալ-դեմոկրատական աշխատավորական կուսակցություն», մինչդեռ «աշխատավորական»-ի փոխարեն պետք է լինի «բանվորական»:

6. Էջ 128-130-ում նույնպես կառաջարկեի հեղինակին ԼՂԻՄ-ում 1988 թ. փետրվարի 12-13-ին տեղ գտած առաջին-ոչ առաջին հանրահավաքների մասին բավարարվել ոչ միայն դաշտային-ազգագրական նյութերի տվյալներով, այլ նաև բազմաթիվ գիտական և հուշային բնույթի հրապարակումներին անդրադառնալով, որոնց զգալի մասն ունի արցախյան գրանցում: Դաշտային նյութն իրապես դառնում է վստահելի աղբյուր, երբ համեմվում է այլ բնույթի աղբյուրներով ու հրապարակումներով:[2]

7. Էջ 132-ում, կրկին հղում տալով դաշտային-ազգագրական նյութերին, նշվում է, որ «[ԼՂԻՄ Մարտունի քաղաքում] Փետրվարի 12-ի հանրահավաքին առկա էին նաև ցուցապաստառներ, որոնց վրա պատկերված էր թուրք երեխան մորից խլելիս»: Կրկին, ատենախոսին ցանկանում ենք հու-

---

[2] Տես, օրինակ, Ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնած Սլավիկ Առուշանյանի հեղինակած «Ինչպես է դա եղել» շարքը «Լուսարար. գիտակրթական թերթ»-ում (11.02.2013, թիվ 2-3 (325-326): 22.02.2013 թիվ 4 (327)):

շել, որ իմ ու Լևոն Աբրահամյանի հեղինակությամբ 2022 և 2023 թթ. ծավալուն հոդված (ավելի քան 50 էջ) է տպագրվել,[3] որտեղ մի ընդարձակ հատված (ավելի քան 8 էջ հայերենում) նվիրված է ցուցապաստառներում «Մայր ու զավակ»-ի թեմային:

8. Էջ 156-157-ում ատենախոսը գրում է. «Քանի որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը հիմնադրվել էր նաև նախկին ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի տարածքների վրա, իսկ Արցախը XIX դարում իրականացված վարչատարածքային վերաձևակերպումների արդյունքում ընդգրկվել էր այդ նահանգի կազմում, ապա Ադրբեջանն իր տարածքային նկրտումները Ղարաբաղի, Նախիջևանի ու Զանգեզուրի նկատմամբ հիմնավորում էր այդ փաստով»: Թերևս անուշադրության սխալ է, քանի որ Նախիջևանը գտնվում էր Երևանի նահանգի կազմում:

9. Էջ 161-ում հեղինակը, հղում անելով ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1990 թ. ապրիլի 3-ին ընդունած օրենքը «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին», նշում էր, որ «Ադրբեջանի դեպքում սա նշանակում էր, որ ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում ԼՂԻՄ-ը և նրան մերձակա հայկական շրջանները կարող էին ազատորեն տնօրինել իրենց ճակատագիրը և ինքնորոշվել»: Այս կերպ է մատուցվել օրենքն ավելի քան երեք տասնամյակ: Մինչդեռ օրենքի *բոլոր* կետերին ուշադիր ծանոթանալու պարագայում պարզ կլինի, որ այո, թղթի վրա «կարող էին» սակայն հաջորդիվ հոդվածները (հատկապես 6-20) նման հնարավորությունը գրեթե անիրատեսական էին դարձնում:

Պետք է նշեմ, որ ատենախոսության մեջ բավականին տառասխալներ կան, օտարահունչ ձևակերպումներ, այլ բնույթի բացթողումներ, որոնք, վստահ եմ, հեղինակը կուղղի ատենախոսական աշխատանքը որպես մենագրություն պատրաստելու և հրատարակության ներկայացնելու պարագայում:

---

[3] Հարություն Մարության, Լևոն Աբրահամյան, «Ղարաբաղ-Հայաստան» թեման հայ ինքնության պատկերագրության մեջ (ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների). – *Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր*, 2023, հասարակական գիտություններ, պրակ 1, էջ 331-383:

Ատենախոսությունը, իմ համոզմամբ, բավարարում է թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, հետևաբար ես միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդին շնորհելու Արտակ Սուրիկի Խաչատրյանին պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հրապարակային պաշտպանության ներկայացրած «ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը և Ղարաբաղյան հակամարտությունը. ազգաբանական ուսումնասիրություն» ատենախոսության համար:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր

Հարություն Տիրանի Մարության

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր Հարություն Տիրանի Մարությանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական քարտուղար, պատմ. գիտ. թեկն. Աստղիկ Ալեքսանդրի Բաբաջանյան

3 նոյեմբերի 2023 թ.